

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍԱՏ)



International Organization for Migration (IOM)
The UN Migration Agency

ՄԱԿ-Ի ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ


ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ





International Organization for Migration (IOM)

The UN Migration Agency



ՄԱԿ-Ի ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
(ԱՐՄՍՍԱՏ)

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԱՏԿԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, 2018 Թ.**

*(Ըստ 2018թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված
հետազոտության կշռված արդյունքների)*

Պատրաստվել է
Միգրացիայի միջազգային կազմակերպության աջակցությամբ

Երևան - 2020

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՍՍ) յուրաքանչյուր տարի իրականացնում է տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (ՏՏԿԱՀ) և ամենամյա պարբերականությամբ հրապարակում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցը աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի, այդ թվում հետազոտվող ժամանակաշրջանում միգրացիայի, վերաբերյալ հանրությանը տեղեկություններ ներկայացնելու նպատակով: Սույն զեկույցի հիմքը 2018թ. ՏՏԿԱՀ-ի արդյունքներով ձևավորված միկրոտվյալների բազան է, որում նկարագրվում է տեղեկատվություն 2017-2018թթ. բնակչության միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսության անդամների վերջին տեղաշարժերի, նրանց բնութագրերի, ինչպես նաև մշտական բնակչության միգրանտների համակցության (ծննդավայրը՝ արտերկիր), նրանց սեռատարիքային կազմի, կրթական մակարդակի, զբաղվածության, առողջապահության, տրանսֆերտների և այլ տվյալների վերաբերյալ:

ՀՀ Միգրացիոն պատկերի պատրաստման աշխատանքները 2016թ. ՏՏԿԱՀ-ի տվյալներով նախաձեռնել է Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելությունը: Վերջինիս հիման վրա ձևավորվել է նաև տվյալների վերլուծական գործիք, որը կիրառվել է նաև 2017 և 2018թթ. ՏՏԿԱՀ տվյալներով ՀՀ միգրացիոն պատկերի ստացման համար:

ՀՀ միգրացիոն պատկերը տեղեկատվության լրացուցիչ աղբյուր կլինի Հայաստանում միգրացիոն շարժի վերջին զարգացումների և միգրանտների համակցության սոցիալ-ժողովրդագրական կազմի և կառուցվածքի վերաբերյալ տեղեկացված լինելու ցանկություն ունեցողների համար:

*0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3
Հեռախոս (+37411) 52-33-56
Ֆաքս (+37411) 52-19-21
Էլ. փոստ info@armstat.am
ՀՀ վիճակագրական կոմիտեի կայք՝ <http://www.armstat.am>,
<http://armstatbank.am>*

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՍՍ), 2020թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱՍՓՈՓՈՒՄ.....	4
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....	7
ՄԻԳՐԱՑԻՈՆ ՀՈՍՔ.....	8
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	14
ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	14
ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ	15
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	17
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ.....	22
ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՀՈՍՔԵՐ (ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ).....	24
ՀՂՈՒՄՆԵՐ	28
ՀԱՎԵԼՎԱԾ.....	29

Համառոտ ամփոփում

Միգրացիայի վերջին ժամանակաշրջանի միտումները

2018թ. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների համաձայն, 2017-2018թթ. ընթացքում, ընդհանուր հաշվով, միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված են եղել տնային տնտեսությունների 218.8¹ հազար անդամներ: ՏՏԿԱՀ-ի արդյունքներով արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում, նրանցից շուրջ 130.9 հազար մարդ (59.8%) մեկնել են իրենց բնակավայրերից և չեն վերադարձել (մեկնածներ), տնային տնտեսությունների 85.5 հազար անդամներ (39.1%) վերադարձել են մեկնումներից, իսկ 2.4 հազար մարդ (1.1%) եղել են տվյալ բնակավայր նոր ժամանածներ: Հետազոտված ժամանակահատվածում տնային տնտեսությունների միգրանտ անդամներից շուրջ 25.3 հազար (11.5%) մարդու տեղաշարժը եղել է ներքին՝ հանրապետության տարածքում:

Մեկնած միգրանտների շրջանում մեծամասնությունը եղել են տղամարդիկ, որոնք մեկնել են Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) քաղաքային վայրեր: Սա համընկնում է այն փաստի հետ, որ վերադարձածների մեծամասնությունը ՌԴ քաղաքային շրջաններից վերադաձած տղամարդիկ են եղել: Մեկնումների ծավալներն առավել ընդգծած են եղել տարեսկզբին՝ հունվար-ապրիլ ամիսներին, իսկ վերադարձած միգրանտներինը՝ տարեվերջին, հոկտեմբերից դեկտեմբեր ժամանակահատվածում: Նոր ժամանած միգրանտների շրջանում մեծամասնություն են կազմել կանայք, ովքեր հիմնականում ժամանել են Գեղարքունիքի, Լոռու և Արմավիրի մարզերի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրեր: Նոր ժամանած միգրանտների շարժը հետազոտվող ժամանակահատվածում հիմնականում կայուն է եղել, և համեմատաբար ավելի բարձր ինտենսիվություն է արձանագրվել հուլիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին:

Մեկնած միգրանտների գրեթե երկու երրորդը, վերադարձած միգրանտների չորսից մեկը (25.6%-ի) որպես իրենց վերջին միգրացիայի հիմնական պատճառ են նշել աշխատանքը: Ընդհանուր առմամբ, մեկնածների ավելի քան 80%-ը, վերադարձածների՝ 75%-ն աշխատել է շինարարության ոլորտում: Ընդ որում, նոր ժամանածների կողմից որպես իրենց միգրացիայի պատճառներ նշվել են՝ աշխատանքը, ընտանիք կազմելը և ընտանիքի հետ վերամիավորվելը: Միգրանտները զբաղված են եղել նաև տնտեսական գործունեության այլ ոլորտներում, այդ թվում՝ մշակող արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, փոխադրումների և պահեստային տնտեսության, վարչարարական և օժանդակ գործունեության:

Միգրանտների համակցությունը

2018թ.-ին Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության կազմում (2,9 միլիոն)¹ գերակշիռ մեծամասնության ծննդավայրը եղել է Հայաստանը, իսկ 106 հազարինը եղել է արտերկիրը: Սույն զեկույցում ծննդյան երկիրն օգտագործվել է որպես միգրանտ բնակչության համակցության փոփոխական: Նշված միգրանտների ծննդավայրը հիմնականում Ռուսաստանի Դաշնությունը, Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) այլ, կամ Եվրոպական երկրներն են եղել:

Միգրանտների մեծամասնությունը կազմել են աշխատանքային ակտիվ կամ դրանից բարձր տարիքի կանայք: Հայաստանում ծնված բնակչության համեմատ՝ միգրանտների շրջանում կանանց գլխավորած տնային տնտեսությունները գերազանցել են տղամարդկանց գլխավորած տնային տնտեսությունները:

Բնակչության միգրանտների համակցությունում զբաղվածությունը 10.8 տոկոսային կետով ավելի ցածր է, քան ՀՀ-ում ծնվածներինը: Միգրանտները հիմնականում զբաղված են եղել՝ գյուղատնտեսության, անտառտնտեսության և ձկնորսության, մշակող

¹ *Բացի այդ, տ/տ 8 հազ. անդամների տեղաշարժերը եղել են նախորդող տարում:*

արդյունաբերության, մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման մասնավոր ձեռնարկություններում:

Մյուս կողմից արձանագրվել է միգրանտների համակցության ավելի բարձր կրթական մակարդակ, քան ՀՀ-ում ծնվածների շրջանում, ընդ որում բարձրագույն կրթություն ունեցողների մասնաբաժնի՝ 5.5 տոկոսային կետի առավելությամբ:

Թե՛ ՀՀ-ում ծնված և, թե՛ միգրանտ բնակչության շրջանում, արձանագրվել է առողջապահության ծառայությունների նվազագույն հասանելիություն:

Դրամական և ապրանքային հոսքեր (տրանսֆերտներ)

Տրանսֆերտները սահմանվել են որպես հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում (այսինքն՝ 2017թ.) արտերկիր փոխանցված կանխիկ գումար կամ բնեղեն ապրանքներ: Միգրացիոն գործընթացներում ներգրավված միգրանտներից՝ շուրջ 146.6 հազարը, որոնք կազմել են նրանց ընդհանուր թվաքանակի մոտ կեսը (54%), տրանսֆերտներ են ուղարկել, հիմնականում ընտանիքի անմիջական անդամներին: Մշտական բնակչության շրջանում 2017թ.-ին տրանսֆերտներ է ուղարկել 19.5 հազար մարդ, իսկ ստացել է՝ 261.5 հազար մարդ: ՀՀ-ից տրանսֆերտներն ուղարկվել են ՌԴ, Եվրոպական երկրներ, ԱՄՆ/Կանադա և այլ երկրներ, իսկ դեպի Հայաստան տրանսֆերտները հիմնականում փոխանցվել են ՌԴ-ից: Թե՛ ելից և թե՛ մտից դրամական և ապրանքային փոխանցումները հիմնականում օգտագործվել են ստացողների ընթացիկ սպառման ծախսերը հոգալու, այդ թվում՝ ուսման, բուժման և այլ նպատակներով:

Հիմնական արդյունքները

- 2018թ.-ին երկրի մշտական բնակչության (2.9 միլիոն) կազմում արձանագրվել է արտերկրում ծնված 106 հազար մարդ: Միգրանտների համակցության մեծամասնությունը եղել են կանայք՝ 25 և ավելի բարձր տարիքի, ծնված Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) այլ երկրներում, որոնք ունեցել են միջնակարգ կամ բարձրագույն կրթություն:
- 2017-2018թթ.-ի ընթացքում միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված ընդամենը բնակչությունից՝ 130.9 հազար մարդ մեկնել են իրենց բնակավայրերից և 2018թ. դրությամբ չեն վերադարձել, 85.5 հազար մարդ՝ վերադարձել են, իսկ 2.4 հազարը՝ առաջին անգամ են ժամանել տվյալ բնակավայր: Նշված ժամանակահատվածում միգրացիոն տեղաշարժերում ընդգրկվածներից՝ 25.3 հազար մարդու (ընդամենը միգրանտների 11.5%-ի) տեղաշարժը եղել է նեքին (Հայաստանում):
- Միգրացիայի վերջին միտումներով արձանագրվել է, որ Հայաստանից մեկնումների ծավալը գերակշռել է ժամանումների ծավալին, ինչի արդյունքում ձևավորվել է միգրացիայի մնացորդի բացասական ցուցանիշ:
- Մեկնածների և վերադարձածների շրջանում միգրացիայի հիմնական պատճառ է հանդիսացել աշխատանքը, իսկ տվյալ բնակավայր նոր ժամանածների շրջանում որպես տեղաշարժի պատճառ, բացի աշխատանքից, հանդիսացել է նաև ուսում/վերապատրաստումը, ընտանիք կազմելը և ընտանիքի վերամիավորումը:
- Մշտական բնակչության կազմում, միգրանտների համակցության մեծամասնությունն աշխատել է գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտներում, նոր ժամանած միգրանտները՝ վարչարարական և օժանդակ գործունեության, իսկ մեկնած և վերադարձած միգրանտների մեծամասնությունն աշխատել է շինարարության ոլորտում:
- Մշտական բնակչության թվաքանակից, 19.5 հազար մարդ 2017թ.-ին (հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 12 ամիսների ընթացքում) ուղարկել են և 261.5 հազար մարդ ստացել են տրանսֆերտներ: Հայաստան փոխանցվող տրանսֆերտների ծագման երկիրը հիմնականում եղել է Ռուսաստանի Դաշնությունը:
- Վերջին միգրանտներից, ընդհանուր հաշվով շուրջ 146.6 հազար մարդ՝ արտերկրից տրանսֆերտներ են փոխանցել, որոնց գերակշիռ մեծամասնությունն ուղարկվել է ընտանիքի անմիջական անդամներին:

Տվյալների նկարագրությունը և սահմանումները

Սույն զեկույցը հիմնված է Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքների վրա, որն իրականացվել է 2018թ.-ին, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի (Արմստատ-ի) կողմից: Ընտրանքի ձևավորման համար օգտագործվել է ներկայացուցչական հավանականային ընտրանքի մեթոդը՝ իրականացված Համաշխարհային բանկի փորձագիտական օժանդակությամբ: Ընտրանքի համար հիմք է հանդիսացել երկրի բոլոր մասնավոր տնային տնտեսությունների հասցեների բազան, որը ստեղծվել է 2011թ.-ի մարդահամարի արդյունքների հիման վրա: Բոլոր հարցվածները Հայաստանի մշտական բնակիչներ են՝ *De Jure* բնակչությունը:² Ընտրանքը կազմելու համար գլխավոր համակցությունը բաժանվել էր 32 ստրատայի, այդ թվում՝ Երևան քաղաքի 12 վարչական շրջանները, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերը: 2018թ.-ին ընտրվել է ընդամենը 5 184 տնային տնտեսություն, որից 3 240-ը քաղաքային և 1 944-ը՝ գյուղական բնակավայրերից (<https://www.armstat.am/am/?nid=82&id=2217>):

Սույն զեկույցում հետազոտության տվյալները ներկայացված են բացարձակ թվաքանակով և տոկոսներով, որոնք հաշվարկվել են, հիմք ընդունելով հետազոտության հարցաթերթի հետևյալ բաժինները՝ (Ա) տնային տնտեսության անդամների ցուցակ, (Բ) միգրացիա, (Գ) զբաղվածություն, (Ե) կրթություն, (Թ) առողջություն (ընդհանուր) և առողջապահություն, և (Ը) դրամական ու ապրանքային հոսքեր տնային տնտեսությունների միջև (<https://www.armstat.am/am/?nid=208>): Բոլոր արդյունքների նկատմամբ կիրառվել են ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից մշակված բնակչության կշիռները: Սույն զեկույցում միգրանտների նույնացման համար օգտագործվել է ծննդյան երկրի մասին ՏՏԿԱՀ-ից ստացված մանրամասն տեղեկատվությունը, իսկ որպես միգրանտների համակցություն սահմանվել են Հայաստանից դուրս ծնված անձիք:³ Մշտական բնակչության կազմում նրանք դիտարկվել են որպես միգրանտների համակցություն: Ծննդյան երկրների մանրամասն ցուցակը ներկայացված է Հավելվածի Աղյուսակ 1-ում:

Միգրացիայի հոսքերին հետևելու համար ՏՏԿԱՀ հարցաթերթում ընդգրկված է հատուկ մոդուլ, որում արձանագրվել են 2017-2018թթ.-ին արձանագրված միգրացիայի վերջին դեպքերը և միգրանտների բնութագրերը:⁴ Դրանք ներառում են մեկնած միգրանտների (այսինքն՝ անձինք, ովքեր մեկնել են և չեն վերադարձել), վերադարձած միգրանտների (այսինքն՝ անձանց, ովքեր մեկնել են և վերադարձել մինչև 3 ամիս, 3-12 ամսվա ընթացքում, և 12 ամիս և ավելի տևողությամբ բացակայությունից հետո) և տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտների (այսինքն՝ առաջին անգամ) վերաբերյալ ստացված պատասխանները: Մոդուլն ընդգրկում է ոչ միայն միգրացիայի վերջին փոփոխությունները Հայաստանում, դեպի Հայաստան և ՀՀ-ից արտասահման, այլև բովանդակային տեղեկատվություն՝ միգրացիայի հիմնական պատճառների և միգրանտների սոցիալ-տնտեսական բնութագրերի մասին:

Սույն զեկույցում, արտերկրում ծնված բնակչությունը դիտարկվել է որպես մշտական բնակչության **միգրանտների համակցություն**: Ըստ այդմ, նրանց սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, այսինքն՝ ժողովրդագրական և տնային տնտեսությունների կառուցվածքի, զբաղվածության, կրթական մակարդակի և առողջապահության հասանելիությանն առնչվող տվյալները դիտարկվում են Հայաստանում ծնված բնակչության

² De Jure բնակչություն համարվում են հաշվառման ժամանակ ներկա կամ ժամանակավորապես բացակա անձիք:

³ Սա վերաբերում է ՏՏԿԱՀ հարցաթերթում «ծննդավայրը» հարցին:

⁴ Տ ՏԿԱՀ մոդուլ Բ-ում հետազոտության հարցերն անդրադառնում են այն անձանց, ովքեր տեղաաշարժվել են 2017թ. հունվարի 1-ից սկսած, և սույն զեկույցում որպես վերջին միգրացիայի ժամանակաշրջան է սահմանված 2016-2017թթ. և ներկայացված են այդ ժամանակաշրջանի վերաբերյալ հետազոտված տվյալները:

նույնանուն տվյալների համեմատությամբ: ՏՏԿԱՀ-ի զբաղվածության վերաբերյալ տեղեկատվությունը վերաբերում է 15-75 տարեկան բնակչությանը,⁵ իսկ կրթական մակարդակը ներկայացված է երեք խոշոր դասերով՝ տարրական և ավելի ցածր, միջնակարգ և բարձրագույն:⁶ **Առողջապահական ծառայությունների հասանելիությունը** համարվել է առողջության ապահովագրությունից օգտվելը կամ տնային տնտեսության առնվազն մեկ անդամի՝ հիմնական ծառայությունների փաթեթից (ՀԾՓ) օգտվելու իրավունքը: **Տրանսֆերտները** սահմանվել են որպես կանխիկ գումարի կամ բնեղեն տեսքով արտերկիր կատարված փոխանցումները՝ հարցմանը նախորդող 12 ամսվա ընթացքում, որոնք վերջին միգրանտների և մշտական բնակչության կազմից՝ միգրանտների համակցության համար, զեկույցում ներկայացված են առանձին:

Միգրացիոն հոսք

Միգրացիայի դինամիկան արտացոլելու համար Գծապատկեր 1-ում և Աղյուսակ 1-ում ներկայացված են 2017-2018թթ.-ի ընթացքում միգրացիայի, այն է՝ իրենց բնակավայրերից մեկնելու, վերադարձի և նոր ժամանածների հոսքերի վերաբերյալ արձանագրված դեպքերը:


Զեկույցում առանձնացված են միգրանտների համակցության և միգրացիայի հոսքերի վերաբերյալ տվյալները: **Վերջին միգրանտներն են՝** ա) միգրանտներ, ովքեր մեկնել և չեն վերադարձել, կամ՝ բ) Հայաստան վերադարձածները՝ մեկնելուց հետո՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս հետո կամ ավելի ուշ, կամ՝ գ) ժամանածները, ովքեր առաջին անգամ են եկել տվյալ բնակավայր՝ 2017-2018թթ.-ի ընթացքում: Մշտական բնակչությունից արտերկրում ծնվածները ներկայացնում են **միգրանտների համակցությունը**: Հաշվետու ժամանակահատվածում իրենց բնակավայրերից մեկնել է ընդհանուր հաշվով 130.9 հազար մշտական բնակիչ, վերադարձել է 85.5 հազար մարդ, և առաջին անգամ տվյալ բնակավայր է ժամանել՝ 2.4 հազար մարդ:

Ըստ Աղյուսակ 1-ում և Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալների, մեկնած և վերադարձած բնակչության գերակշիռ մեծամասնության (համապատասխանաբար՝ 97.9%-ի և 94.9%-ի) ծննդավայրը եղել է ՀՀ-ն, իսկ մնացած փոքրաթիվ մասի (մեկնած միգրանտների 2.1%-ի և վերադարձած միգրանտների 5.1%-ի) ծննդավայրը՝ արտերկիրը: Տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտների գերակշիռ մեծամասնության (94.8%) ծննդավայրը Հայաստանն է եղել: Գծապատկեր 2-ի տվյալները ցույց են տալիս, որ մեկնած միգրանտների 90.1%-ը և վերադարձած միգրանտների 64.1%-ը կազմել են տղամարդիկ, իսկ նոր ժամանած միգրանտների շրջանում կանանց մասնաբաժինը կազմել է՝ 76.3% :

⁵ Պաշտոնական կենսաթոշակային տարիքը կանանց և տղամարդկանց համար 63 տարեկանն է :


⁶ Տարրական կրթությունը ներառում է տարրականից բարձր մինչև ընդհանուր (հիմնական) կրթություն ունեցող բնակչությունը: Միջնակարգ կրթությունը ներառում է միջնակարգ, ինչպես նաև արհեստագործական կրթություն ունեցող բնակչությանը: Բարձրագույն կրթությունը ներառում է բակալավրիատի և ավելի բարձր աստիճանի կրթություն ունեցող բնակչությանը:

Գծապատկեր 1. Մեկնած, վերադարձած և նոր ժամանած միգրանտների տեսակարար կշիռները, 2017-2018թթ.-ին, %



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Գծապատկեր 2. Վերջին միգրանտների բաշխումն ըստ սեռի, տոկոսներով, 2017-2018թթ.,%



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Վերը նշված առանձնահատկություններն ամփոփված են ստորև բերված Աղյուսակ 1-ում, որում, բացի այդ, ներկայացված է նաև մեկնած, վերադարձած և նոր ժամանած միգրանտների մեկնման կամ վերադարձի մարզը, երկիրը: Ընդհանուր առմամբ, ՌԴ է մեկնել 95.8 հազար մարդ, որը կազմել է մեկնած միգրանտների 73.2%-ը, իսկ 17.6 հազար մարդու (մեկնածների 13.4%-ի) տեղաշարժը եղել է ներհանրապետական⁷:

⁷ Ներքին միգրացիան վերաբերվում է բոլոր վերջին միգրանտներին՝ ք.Երևանում և ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

Հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված մեկնումներին համահունչ՝ վերադարձաձևերի շրջանում ևս մեծամասնություն է կազմել ՌԴ-ից վերադարձը (71%): Ինչ վերաբերվում է նոր ժամանած միգրանտներին, ապա հիմնականում նրանց տեղակայման վայր են հանդիսացել Գեղարքունիքի (42.7%), Լոռու(26.1%) և Արմավիրի (10.7%) մարզերը և ք.Երևանը (7.7%): Ինչպես մեկնած, այնպես էլ վերադարձած ու նոր ժամանած միգրանտները գերադասել են քաղաքային բնակավայրերը՝ մեկնած միգրանտների 88.4%-ի տեղաբարձը եղել է դեպի քաղաքային բնակավայրեր, վերադարձաձևերի 99.2%-ը վերադարձել են քաղաքային բնակավայրերից, մինչդեռ նոր ժամանածների շրջանում արձանագրվել է համեմատաբար ավելի հավասարաչափ բաշխում՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի (42.6 %-ը՝ քաղաքային և 57.4 %-ը՝ գյուղական):

Աղյուսակ 1. Միգրացիոն հոսքերի ծավալը և վայրը, 2017-2018թթ.

Միգրացիոն հոսք								
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Բացարձակ թվաքանակ				Տոկոսներով			
Օննոյան երկիրը								
ՀՀ	128 061	81 138	2 303	211 503	97.9	94.9	94.8	96.7
Միգրանտներ	2 787	4 401	127	7 315	2.1	5.1	5.2	3.3
Ընդամենը	130 848	85 539	2 429	218 817	100	100	100	100
Մեզը								
Տղամարդիկ	117 917	54 798	577	173 292	90.1	64.1	23.7	81.8
Կանայք	12 931	30 741	1 853	45 525	9.9	35.9	76.3	18.2
Ընդամենը	130 848	85 539	2 429	218 817	100	100	100	100
Մեկնման կամ վերադարձի մարզը կամ երկիրը								
Երևան	11 120	1 827	187	13 133	8.5	2.1	7.7	6.0
Արագածոտն	0	200	24	224	0.0	0.2	1.0	0.1
Արարատ	669	41	0	710	0.5	0.0	0.0	0.3
Արմավիր	1 121	24	260	1 405	0.9	0.0	10.7	0.6
Գեղարքունիք	1 265	654	1 038	2 957	1.0	0.8	42.7	1.4
Լոռի	299	0	635	934	0.2	0.0	26.1	0.4
Կոտայք	205	399	0	605	0.2	0.5	0.0	0.3
Շիրակ	0	512	159	671	0.0	0.6	6.6	0.3
Սյունիք	1 614	100	0	1 714	1.2	0.1	0.0	0.8
Վայոց ձոր	570	600	0	1 171	0.4	0.7	0.0	0.5
Տավուշ	719	1 014	0	1 734	0.5	1.2	0.0	0.8
ՌԴ	95 834	60 739	127	156 699	73.2	71.0	5.2	71.6
ԱՊՀ այլ երկրներ	487	2 921	0	3 408	0.4	3.4	0.0	1.6
Եվրոպական այլ երկրներ	2 282	6 931	0	9 213	1.7	8.1	0.0	4.2
ԱՄՆ կամ Կանադա	382	1 539	0	1 921	0.3	1.8	0.0	0.9
Արցախի Հանրապետություն	13 797	3 035	0	16 832	10.5	3.5	0.0	7.7
Վրաստան	240	3 499	0	3 740	0.2	4.1	0.0	1.7
Այլ	243	1 505	0	1 747	0.2	1.8	0.0	0.8
Ընդամենը	130 848	85 539	2 429	218 817	100	100	100	100
Ուրբանիզացիայի մակարդակը								
Քաղաքային	15 548	5 329	981	21 859	88.4	99.2	42.6	86.5
Գյուղական	2 036	41	1 322	3 399	11.6	0.8	57.4	13.5
Ընդամենը	17 584	5 370	2 303	25 257	100	100	100	100

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 1 (ծննդավայրը), հարց 2 (Մեկնման կամ վերադարձի մարզը կամ երկիրը) և հարց 3 (բնակավայրի տեսակը): Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել են և չեն վերադարձել հաշվետու ժամանակաշրջանում: Վերադարձած միգրանտների կազմում ներառվել են այն անձանց տվյալները, որոնց վերադարձն արձանագրվել է՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են: ԱՊՀ-ն՝ Անկախ պետությունների համագործակցության հապավումն է:

Աղյուսակ 2-ում ներկայացված են հետազոտված ժամանակաշրջանում վերջին միգրացիոն շարժի տարեթվի և ամսվա վերաբերյալ տվյալներ: Այսպես, վերադարձած միգրանտների ավելի քան կեսի (53.5%) և նոր ժամանածների գերակշիռ մեծամասնության (94%) տեղաշարժն արձանագրվել է 2017թ.-ին, իսկ մեկնումներինը՝ գերակշռել են 2018թ.-ին:

Մեկնած և վերադարձած (այդ թվում՝ նաև նոր ժամանած) միգրանտների ամփոփ ցուցանիշների տարբերությունով՝ հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է միգրացիայի բացասական մնացորդ⁸:

Ամիսների բաշխումով արձանագրված տվյալների համաձայն, մեկնումներն ավելի ինտենսիվ են եղել տարեսկզբին՝ հունվար-ապրիլ ամիսներին, 13.1%-ից մինչև 19.5% համամասնություններով: Վերադարձածների ամենաբարձր ցուցանիշը՝ 11.2% - 13.7%, գրանցվել է տարեվերջին՝ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Մինչդեռ նոր ժամանածների տեղաշարժերն առավել ինտենսիվ են եղել՝ սեպտեմբեր (31%) և դեկտեմբեր (47.9%) ամիսներին:

Աղյուսակ 2. Վերջին միգրացիայի տարին և ամիսը, 2017-2018թթ.

	Միգրացիոն հոսք				Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը					
	Բացարձակ թվաքանակ					Տոկոսներով			
Միգրացիայի տարին									
2017թ.	41 409	45 779	2 283	89 470	31.6	53.5	94.0	40.9	
2018թ.	89 440	39 761	147	129 347	68.4	46.5	6.0	59.1	
Ընդամենը	130 848	85 539	2 429	218 817	100	100	100	100	
Միգրացիայի ամիսը									
Հունվար	19 779	4 954	0	24 733	15.1	5.8	0.0	11.3	
Փետրվար	19 203	3 711	0	22 914	14.7	4.3	0.0	10.5	
Մարտ	25 452	3 492	0	28 944	19.5	4.1	0.0	13.2	
Ապրիլ	17 201	5 834	147	23 182	13.1	6.8	6.0	10.6	
Մայիս	13 013	6 156	41	19 210	9.9	7.2	1.7	8.8	
Հունիս	8 085	4 803	0	12 888	6.2	5.6	0.0	5.9	
Հուլիս	5 727	6 942	260	12 929	4.4	8.1	10.7	5.9	
Օգոստոս	4 190	9 517	0	13 707	3.2	11.1	0.0	6.3	
Սեպտեմբեր	7 639	8 099	753	16 491	5.8	9.5	31.0	7.5	
Հոկտեմբեր	4 728	11 755	65	16 548	3.6	13.7	2.7	7.6	
Նոյեմբեր	1 707	10 714	0	12 421	1.3	12.5	0.0	5.7	
Դեկտեմբեր	4 124	9 562	1 165	14 851	3.2	11.2	47.9	6.8	
Ընդամենը	130 848	85 539	2 429	218 817	100	100	100	100	

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 5 (միգրացիայի տարեթիվը), հարց 4 (միգրացիայի ամիսը Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել են և չեն վերադարձել հաշվետու ժամանակաշրջանում: Վերադարձած միգրանտներն այն անձիք են, որոնց վերադարձն արձանագրվել է՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են:

⁸ Միգրացիայի մնացորդը սահմանվում է երկիր ժամանածների (նորեկների և վերադարձածների) և երկրից դուրս եկածների տարբերությամբ (Եվրոստատ, 2000):

Աղյուսակ 3. Գծապատկեր 3ա, 3բ և 3գ-ում ներկայացված են միգրանտների վերջին շարժի՝ միգրացիայի հիմնական պատճառները: Մեկնած միգրանտների ավելի քան երկու երրորդը մեկնել են աշխատելու կամ աշխատանք փնտրելու նպատակով: Վերադարձած միգրանտների չորսից մեկը ժամանել է աշխատելու, 18.6 %-ը՝ մասնավոր այցի, ծանոթների և ազգականների մոտ, 16.8%-ը՝ ընտանեկան (ընտանիք կազմել/վերամիավորվել) պատճառներով պայմանավորված: Տվյալ բնակավայր առաջին անգամ ժամանածների մեծամասնության կողմից ժամանման պատճառ է նշվել աշխատանքը (42.7%), հինգից մեկի համար ընտանիք կազմելը/ընտանիքի հետ վերամիավորվելը և 5.2%-ի համար՝ բնակություն հաստատելը: Տվյալ բնակավայր նոր ժամանածների (նորեկների) 31%-ը՝ որպես ժամանաման պատճառ նշել է ուսումը/վերապատրաստումը:


Աղյուսակ 3. Միգրանտների վերջին շարժի՝ միգրացիայի հիմնական պատճառները, 2017-2018թթ.

Միգրացիայի հիմնական պատճառները	Միգրացիոն հոսք				Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը								
	Բացարձակ թվաքանակ								Տոկոսներով			
Աշխատանք	95 782	21 868	1 038	118 688	73.2	25.6	42.7	54.2				
Ընտանեկան	2 838	14 403	512	17 753	2.2	16.8	21.1	8.1				
Բնակության	4 208	4 099	127	8 434	3.2	4.8	5.2	3.9				
Ուս. /վերապ.	7 596	2 421	753	10 770	5.8	2.8	31.0	4.9				
Բիզնես	0	2 123	0	2 123	0.0	2.5	0.0	1.0				
Մասնավոր այց	3 195	15 888	0	19 083	2.4	18.6	0.0	8.7				
Աշխատանքի ավարտ	0	13 584	0	13 584	0.0	15.9	0.0	6.2				
Այլ	17 229	11 153	0	28 382	13.2	13.0	0	13.0				
Ընդամենը	130 848	85 539	2 430	218 817	100	100	100	100				

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ծանոթություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ. Աղյուսակ 1 հարց 6 (Միգրացիայի հիմնական պատճառները): Ընտանեկան՝ ներառում են ընտանիք կազմելու, օրինակ՝ ամուսնանալու և ընտանիքի վերամիավորման հետ կապված պատճառները: Մասնավոր այցելությունը ներառում է, օրինակ՝ այցելություն ազգականներին և ծանոթներին, զբոսաշրջություն և բուժում: Մեկնած միգրանտներն անձիք են, ովքեր մեկնել և չեն վերադարձել հաշվետու ժամանակաշրջանում: Վերադարձած միգրանտներն այն անձիք են, որոնց վերադարձն արձանագրվել է՝ 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են:

Գծապատկերներ 3ա, 3բ և 3գ. Միգրացիայի հիմնական պատճառները՝ մեկնած միգրանտների (ձախից) վերադարձած միգրանտների (կենտրոնում) և նոր ժամանած միգրանտների (աջից) շրջանում, 2017-2018թթ.,%



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Աղյուսակ 4-ում ներկայացված են միգրանտների տնտեսական գործունեության տեսակներն, ըստ՝ վերջին միգրացիայի ընթացքում նրանց ծախսած առավելագույն ժամանակի կամ ստացած առավելագույն եկամուտի: Վերջին տեղաշարժի ընթացքում, մեկնած միգրանտների գերակշիռ մեծամասնության (80%-ի) տնտեսական գործունեությունը եղել է շինարարության, 4.4%-ինը՝ մեծածախ և մանրածախ առևտրի, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգման, 4.3%-ինը՝ փոխադրումների և պահեստային տնտեսության, 4.1%-ինը՝ մշակող արդյունաբերության ոլորտները: Վերադարձած միգրանտների գերակշիռ մեծամասնությունը (75.1%) ևս միգրացիայում գտնվելու ընթացքում ներգրավված է եղել շինարարական աշխատանքներում, իսկ նոր ժամանած միգրանտները զբաղված են եղել վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտում:

Աղյուսակ 4. Միգրանտների հիմնական տնտեսական գործունեությունը (NACE Rev: 2) վերջին տեղաշարժի ընթացքում, 2017-2018թթ.

Հիմնական տնտեսական գործունեություն (NACE Rev:2)	Միգրացիոն հոսք				Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Մեկնած միգրանտ	Վերադարձած միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը				
	Բացարձակ թվաքանակ				Տոկոսներով			
A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	478	675	0	1 152	0.5	1.8	0.0	0.9
B. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	356	0	0	356	0.4	0.0	0.0	0.3
C. Մշակող արդյունաբերություն	3 953	875	0	4 827	4.1	2.3	0.0	3.6
D. Էլեկտրականության, գազի, ջրի և լավորակ սոցի մատակարարում	51	100	0	151	0.1	0.3	0.0	0.1
E. Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	314	0	0	314	0.3	0.0	0.0	0.2
F. Շինարարություն	76 756	28 953	0	105 709	80.1	75.1	0.0	78.5
G. Մեծածախ և մանրածախ առևտուր. Ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	4 233	3 842	0	8 076	4.4	10.0	0.0	6.0
H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	4 132	1 264	0	5 395	4.3	3.3	0.0	4.0
I. Կացության և հանրային սննդի կազմակերպում	1 706	966	0	2 672	1.8	2.5	0.0	2.0
J. Տեղեկատվություն և կապ	441	93	0	534	0.5	0.2	0.0	0.4
K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	51	0	0	51	0.1	0.0	0.0	0.0
L. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	0	0	0	0	0.3	0.0	0.0	0.2
M. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	244	0	0	244	0.2	0.2	0.0	0.2
N. Վարչարարական և օժանդակ գործունեություն	200	93	0	292	2.0	0.8	100.0	1.8
O. Պետական կառավարում և պաշտպանություն. Պարտադիր սոցիալական ապահովություն	1 883	291	260	2 433	0.5	1.8	0.0	0.9
P. Կրթություն	208	93	0	300	0.2	0.2	0.0	0.2
Q. Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	193	0	0	193	0.2	0.0	0.0	0.1
R. Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	273	667	0	939	0.3	1.7	0.0	0.7

Հիմնական տնտեսական գործունեություն (NACE Rev:2)	Միգրացիոն հոսք				Ընդամենը	Մեկնած միգրանտ	Վերադարձված միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը
	Մեկնած միգրանտ	Վերադարձված միգրանտ	Նոր ժամանած միգրանտ	Ընդամենը					
	Բացարձակ թվաքանակ					Տոկոսներով			
S. Սպասարկման այլ ծառայություններ	191	333	0	524	0.2	0.9	0.0	0.4	
T. Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու - Տնային տնտեսություններում չտարբերված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	222	222	0	444	0.2	0.6	0.0	0.3	
U. Օտարերկյա կազմակերպությունների գործունեություն	0	93	0	93	0.0	0.2	0.0	0.1	
Ընդամենը	95 885	38 560	260	134 699	100	100	100	100	

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ցանկություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Բ, Աղյուսակ 1 հարց 8 (հիմնական տնտեսական գործունեությունը, այսինքն՝ աշխատանքներ, որ իրականացրել են իրենց ժամանակի մեծ մասի տրամադրումով կամ ստացել են առավելագույն աշխատավարձ/եկամուտ իրենց վերջին միգրացիայի ընթացքում: Մեկնած միգրանտներն անձինք են, ովքեր մեկնել և չեն վերադարձել: Վերադարձված միգրանտները ներառում են այն անձանց, ովքեր վերադարձել են 3 ամսվա, 3-12 ամսվա ընթացքում և 12 ամիս անց կամ ավելի ուշ: Նոր ժամանածները՝ տվյալ բնակավայր նոր ժամանած միգրանտներն են:

Միգրանտների համակցությունը

Ժողովրդագրություն

2018թ.-ին Հայաստանի մշտական բնակչության (2.9 միլիոն) կազմում՝ 96.3%-ի ծննդավայրը եղել է Հայաստանը, իսկ 3.7%-ինը՝ արտերկիրը (միգրանտներ): Աղյուսակ 5-ում միգրանտները խմբավորված են ըստ ծննդավայրի, այդ թվում՝ ԱՊՀ այլ երկրներ (1.5%), ՌԴ (0.5%) և Եվրոպական այլ երկրներ (0.1%): Աղյուսակ 6-ում ներկայացված է մշտական բնակչության բաշխումն՝ ըստ սեռի և տարիքային խմբերի: Բնակչության կազմում գերակշռում են կանայք թե՛ ՀՀ-ում ծնված, և թե՛ միգրանտ բնակչության շրջանում (երկրում ծնվածների 52.2%-ը, միգրանտների՝ 60.6%-ը): Միգրանտ բնակչության շրջանում մեծամասնությունը (93.6%) եղել են աշխատանքային ակտիվ և ավելի բարձր տարիքի (≥ 25) անձինք, ՀՀ-ում ծնված բնակչության՝ 69.0%-ի համեմատատ: Մինչև 5 տարեկան երեխաները կազմել են ՀՀ-ում ծնված բնակչության՝ 7.2%-ը, միգրանտների՝ 2.5%-ը, համեմատ:

Աղյուսակ 5. Բնակչության բաշխումն ըստ ծննդյան երկրի, 2018թ.

Ծննդյան երկիրը	Բացարձակ թվաքանակ	Տոկոսներով
Հայաստան	2 771 168	96.3
Ռուսաստանի Դաշնություն	15 152	0.5
ԱՊՀ այլ երկրներ	42 848	1.5
Եվրոպական այլ երկրներ	2 802	0.1
Այլ	45 214	1.6
Ընդամենը	2 877 185	100

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Ցանկություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 6 (ծննդավայրը): Այս զեկույցում Հայաստանից դուրս ծնված անձինք դասակարգվում են որպես միգրանտների համակցություն: Նրանք կազմում են բնակչության 3.7%-ը: ԱՊՀ-ն՝ Անկախ պետությունների համագործակցության հապավումն է:

Աղյուսակ 6. Բնակչության բաշխումն ըստ սեռի և տարիքի, 2018թ.

	Մենայան երկիրը			ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը
	ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը			
	Բացարձակ թվաքանակ			Տոկոսներով		
Սեռը						
Տղամարդիկ	1 324 710	41 776	1 366 486	47.8	39.4	47.5
Կանայք	1 446 458	64 241	1 510 699	52.2	60.6	52.5
Ընդամենը	2 771 168	106 017	2 877 185	100	100	100
Տարիքային կառուցվածքը						
0-5 տարեկան	200 050	2 657	202 707	7.2	2.5	7.1
6-14 տարեկան	327 623	1 690	329 313	11.8	1.6	11.4
15-24 տարեկան	331 996	2 407	334 403	12.0	2.3	11.6
25-62 տարեկան	1 465 434	51 862	1 517 296	52.9	48.9	52.7
63 տարեկան և ավելի	446 065	47 400	493 466	16.1	44.7	17.2
Ընդամենը	2 771 168	106 017	2 877 185	100	100	100

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքները):

Մանկություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 1 (սեռը), հարց 3 և 4 (ծննդյան ամիսը և տարին): Հայաստանում կանանց և տղամարդկանց կենսաթոշակի անցնելու տարիքը՝ 63-ն է: Միգրանտները Հայաստանից դուրս ծնված անձինք են:

Տնային տնտեսությունների կազմը

Աղյուսակ 7-ում ներկայացված է տնային տնտեսությունների կազմը: Միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների 21.0%-ը բաղկացած է եղել մեկ անձից: Հայաստանում ծնված բնակչության շրջանում ամենատարածվածը երկու և չորս անձից բաղկացած տնային տնտեսություններն են եղել, համապատասխանաբար՝ 19.3% և 19.1% համամասնություններով:

Աղյուսակ 7. Բնակչության բաշխումն ըստ տնային տնտեսությունների կազմի, 2018թ.


S/տ անդամների թիվը	Մենայան երկիրը			ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը
	ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը			
	Բացարձակ թվաքանակ			Տոկոսներով		
1	103 872	10 611	114 483	13.8	21.0	14.2
2	145 240	11 501	156 741	19.3	22.8	19.5
3	127 618	6 976	134 594	17.0	13.8	16.8
4	144 094	7 529	151 623	19.1	14.9	18.9
5	115 727	6 452	122 179	15.4	12.8	15.2
6	70 860	3 781	74 641	9.4	7.5	9.3
7	26 686	2 520	29 206	3.5	5.0	3.6
8+	18 751	1 109	19 860	2.5	2.2	2.5
Ընդամենը	752 848	50 479	803 327	100	100	100

Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Մանկություն՝ ՏՏԿԱՀ մոդուլ Ա, Աղյուսակ 1 հարց 6 (ծննդյան վայրը): Միգրանտներ են համարվել Հայաստանից դուրս ծնված անձինք:

Գծապատկեր 4-ը ցույց է տալիս, որ կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների մասնաբաժինն ավելի բարձր է եղել միգրանտների (47.1%), քան ՀՀ-ում ծնվածների (32.2%) շրջանում: Աղյուսակ 8-ում ներկայացված են տնային տնտեսությունների գլխավորների բնութագրիչները: ՀՀ-ում ծնված տնային տնտեսությանների գլխավորների՝ 40.8%-ը և միգրանտ գլխավորների՝ 61.6%-ը կազմել են 63 տարեկան և ավելի բարձր տարիքի անձիք: Բացի այդ, ըստ նկարագրական վիճակագրության տվյալների, տնային տնտեսությունների գլխավորի միջին տարիքը միգրանտների համար՝ 65 տարեկանն է, ՀՀ ում ծնվածների՝ 59 տարեկան միջին ցուցանիշի համեմատությամբ:

Գծապատկեր 4. Տնային տնտեսությունների գլխավորների բաշխումն ըստ սեռի, 2018թ.



Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ, 2018թ. (բնակչության կշռված արդյունքներով):

Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների գլխավորի բնութագրիչները, 2018թ.

Տնային տնտեսության գլխավորի	Ծննդյան երկիրը			ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը	ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը
	ՀՀ-ում ծնված	Միգրանտ	Ընդամենը						
Բացարձակ թվաքանակ									
Մեռք							Տոկոսներով		
Տղամարդիկ	510 705	26 683	537 388	67.8	52.9	66.9			
Կանայք	242 143	23 796	265 939	32.2	47.1	33.1			
Ընդամենը	752 848	50 479	803 327	100	100	100			
Տարիքային բաշխումը									
15-35 տարեկան	56 517	1 619	58 136	7.5	3.2	7.2			
36-50 տարեկան	150 309	4 497	154 806	20.0	8.9	19.3			
51-62 տարեկան	239 192	13 249	252 441	31.8	26.2	31.4			
63 տարեկան և բարձր	306 831	31 114	337 944	40.8	61.6	42.1			
Ընդամենը	752 848	50 479	803 327	100	100	100			
